

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/6

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ԱՍԳԻ» ՍՊԸ 17.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ 12.11.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204695 արձանագրության դեմ:

«ԱՍԳԻ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

սույն թվականի նոյեմբերի 2-ին Էրեբունու հարկային տեսչության տեսուչների կողմից կատարվել է ստուգում «ԱՍԳԻ» ՍՊԸ-ի ճաշարանում: Գնվել է սուրճ: Գործարքը կատարելու պահին ՀԴՄ-ն, (որը նոր սերունդի է MF 2351) ունեցել է կապի ապահովման խնդիր, որի պատճառով ՀԴՄ-ն կտրոն դուրս չի բերել: Աշխատողն այդ մասին տեղյակ է պահել: Մոտենալով տեսուչը ՀԴՄ-ին, ինչ որ գործողություն է կատարել և ՀԴՄ-ն աշխատել է: Աշխատողը տպել է 200 դրամը: Չանդարդառնալով տեսուչի հետագա գործողությանը հարկ է նշել, որ միանգամից նա հայտնել է աշխատողին, որ խախտվել է օրենքը, որի համար «ԱՍԳԻ» ՍՊԸ-ն պետք է տուգանվի: Այդ դեպքից հետո ՀԴՄ-ն շարունակել է աշխատել խափանումներով:

Նոյեմբերի 12-ին ՀԴՄ-ն հանձնվել է «ՀԴՄ ՇՏՐԻԽ» ՍՊԸ-ին: Նրանք ստուգել են և ժամանակավոր հանձնել մեկ այլ ՀԴՄ (մոդել MF 2351) մինչև ընկերության ՀԴՄ-ն կկարգավորեն, որովհետև առկա էր ծրագրային թերություն:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է հաշվի առնել իր դիմումը և չկիրառել տուգանք, առավել ևս կտրոն չտրամադրելը որևէ հարկային խնդիր չի առաջացնում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Էրեբունու ՀՏ պետի 29.10.2014 թ-ի թիվ 6204695 հանձնարարագրի «ԱՍԳԻ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 12.11.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204695 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչներ Զ.Պողոսյանի և Մ.Պետրոսյանի կողմից 02.11.2014 թ-ին, ժամը 16:05-ին ք.Երևան, Արին Բերդի 11/4 հասցեում գործող «ԱՍԳԻ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետում միտուցված ծառայության դիմաց (2 բաժակ սև սուրճ, 1 բաժակը՝ 100 դրամ) կատարվել է 200 դրամ կանխիկ գումարի վճարում, որը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 16:08-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Հարկային տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 200 դրամը, ժամը 16:10-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 200 դրամ ընդհանուր հասույթով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «ԱՍԳԻ» ՍՊԸ կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջները, որն

առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Քննարկման ընթացքում ընկերության ներկայացուցիչը նշեց, որ վերոգրյալ հսկիչ գնման ժամանակ ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, քանի որ գործարքը կատարելու պահին ՀԴՄ-ն ունեցել է կապի ապահովման խնդիր:

Վերոգրյալի կապակցությամբ հսկիչ գնումն իրականացրած պաշտոնտար անձինք նշեցին հետևյալը: Մասնավորապես, երբ հսկիչ գնումն իրականացնող անձինք ծառայությունը մատուցած աշխատակցին հարցրել են, թե ինչու վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն, հնչել է պատասխան, որ ՀԴՄ-ն գտնվում է անսարք վիճակում: Հսկիչ գնումն իրականացնող պաշտոնտար անձինք Ընկերության աշխատակցի ուղեկցությամբ գնացել են այն սենյակը, որտեղ գտնվել է ՀԴՄ սարքը: Վերջինիս գննությամբ հարկային տեսուչներն պարզել են, որ այն ընդհանրապես հոսանքին միացված չէ: ՀԴՄ սարքը հոսանքին միացվելուց հետո այն աշխատել է, որից հետո ժամը 16:08-ին հսկիչ գնումն իրականացրած պաշտոնտար անձինք ՀԴՄ-ից դուրս են բերվել Z հաշվետվություն (որում հասույթը կազմել է 0 դրամ), չմուտքագրված գումարը՝ 200 դրամը, մուտքագրել են ՀԴՄ և նորից դուրս բերել Z հաշվետվություն: Այսինքն, հսկիչ գնումն իրականացրած պաշտոնտար անձանց կողմից իրականացվել են գործողություններ, որոնցով հիմնավորվել է կատարված հսկիչ գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 21-րդ կետի համաձայն. «ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձն անհրաժեշտության դեպքում տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կենտրոն) ներկայացնում է հայտ՝ համաձայն N 4 ձևի՝ անսարքության վերացման համար՝ հայտի մեկ օրինակը ներկայացնելով հարկային տեսչություն: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են «ԱՍԳԻ» ՍՊԸ կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ 12.11.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204695 արձանագրությունը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

